ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/254

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26-1/18217-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության 02.12.2020թ. թիվ 3/27/52961-20 գրության հիման վրա 08.12.2020թ. թիվ 26/26-1/18217-2020 գրությամբ նախաձեռնել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/254 ընթացակարգի շրջանակներում 14.12.2020թ. ժամը 10:35-ին և 18.12.2020թ. ժամը

09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.12.2020թ. թիվ 3/27/52961-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է ձեռնարկել միջոցներ՝ Ընկերությանն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/254 ընթացակարգի շրջանակներում 14.12.2020թ. ժամը 10:35-ին և 18.12.2020թ. ժամը 09:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/254 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/254 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը՝ տվյալ դեպքում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման, վերանորոգման ծառայությունների (հետայսու նաև՝ Ծառայություն) մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի

պահանջների:

2. Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ծառայությունը պետք է մատուցվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 21 հետո, պատվիրատուի մոտ պահանջն առաջանալեու դեպքում հանձայն տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջների, մինչև ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

4. Պայմանագրի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ կետով սահմանվել է, որ աշխատանքների կատարման ծավալները Պատվիրատուի կողմից ներկայացվելու են աշխատանքների կատարման և վերանորոգման պահանջարկը առաջանալու դեպքում:

6. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետի համաձայն՝ ***Մասնակիցը պետք է հավաստի, որ Պատվիրատուի պահանջարկի դեպքում նույն օրվա ընթացքում պետք է ապահովի ներկայացվող աշխատանքների կատարումը, կախված պատվերի ծավալից, բայց ոչ ուշ, քան պատվիրատուի կողմից առաջարկված նախընտրելի ժամանակահատվածում:***

7. Պատվիրատուն «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Համաձայն 24.03.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական շենքի (ք. Երևան, Իսակովի 9 հասցեում), մեկ աշխատասենյակում մետալոպլաստե սպիտակ դռան տեղադրում արտասահմանյան պրոֆիլով իր փականով, ինչպես նաև պատերի երեսպատում գիպսակարտոնով և մետալոպլաստե կարկասով: Վերոնշյալ աշխատանքների կատարման համար մեր կողմից բազմիցս բանավոր կերպով տեղեկացվել է Ձեզ: Խնդրում եմ յոթ աշխատանքային օրվա ընթացքում կատարել Ձեր կողմից պայմանագրային պարտավորությունները»:

8. Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 16.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«07.10.2020թ. Ձեր կազմակերպությանն ուղղված գրության մեջ նշվել է, որ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական շենքի (ք. Երևան, Իսակովի 9 հասցեում), մեկ աշխատասենյակում մետալոպլաստե սպիտակ դռան տեղադրում արտասահմանյան պրոֆիլով իր փականով, ինչպես նաև պատերի երեսպատում գիպսակարտոնով և մետալոպլաստե կարկասով, որի համար Ձեզ տրվել է 7 աշխատանքային օր՝ համաձայն 24.03.2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետի պահանջի /նշելով վերանորոգման համար նախընտրելի ժամանակահատված/:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ գրությամբ նախատեսված աշխատանքները «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել, ինչպես նաև գրությանը արձագանք չի եղել, որից հետևում է, որ կազմակերպությունը կարող էր կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները և այլ ժամկետ սահմանելու կարիք չի եղել, ուստի Ձեզ ևս մեկ անգամ տրվում է 3 աշխատանքային օր վերոնշյալ ծառայությունների մատուցման համար, հակառակ դեպքում 24.03.2020թ. կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագրի 2.1.3 և 7.9-րդ կետով սահմանված պահանջներով պայմանագիրը միակողմանի կլուծարվի և Ձեր հանդեպ կկիրառվեն վերոնշյալ պայմանագրի 5-րդ կետով սահմանված դրույթները»:

10.«ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 26.11.2020թ. թիվ 27/1188 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ

կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից»:

11. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 26.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26-1/18217-2020 գրությունը, ՀՀ ոստիկանության 02.12.2020թ. թիվ 3/27/52-20961-20 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը՝ տվյալ դեպքում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, ստանձնում է շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման, վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ծառայությունը պետք է մատուցվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 21 հետո, պատվիրատուի մոտ պահանջն առաջանալեու դեպքում հանձայն տեխնիկական

բնութագրով ներկայացված պահանջների, մինչև ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ կետով սահմանվել է, որ աշխատանքների կատարման ծավալները Պատվիրատուի կողմից ներկայացվելու են աշխատանքների կատարման և վերանորոգման պահանջարկը առաջանալու դեպքում:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետի համաձայն՝ ***Մասնակիցը պետք է հավաստի, որ Պատվիրատուի պահանջարկի դեպքում նույն օրվա ընթացքում պետք է ապահովի ներկայացվող աշխատանքների կատարումը, կախված պատվերի ծավալից, բայց ոչ ուշ, քան պատվիրատուի կողմից առաջարկված նախընտրելի ժամանակահատվածում:***

Պատվիրատուն «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 24.03.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական շենքի (ք. Երևան, Իսակովի 9 հասցեում), մեկ աշխատասենյակում մետալոպլաստե սպիտակ դռան տեղադրում արտասահմանյան պրոֆիլով իր փականով, ինչպես նաև պատերի երեսպատում գիպսակարտոնով և մետալոպլաստե կարկասով: Վերոնշյալ աշխատանքների կատարման համար մեր կողմից բազմիցս բանավոր կերպով տեղեկացվել է Ձեզ: Խնդրում եմ ***յոթ աշխատանքային օրվա ընթացքում կատարել Ձեր կողմից պայմանագրային պարտավորությունները***»:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 16.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«07.10.2020թ. Ձեր կազմակերպությանն ուղղված գրության մեջ նշվել է, որ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության վարչական շենքի (ք. Երևան, Իսակովի 9 հասցեում), մեկ աշխատասենյակում մետալոպլաստե սպիտակ դռան տեղադրում արտասահմանյան պրոֆիլով իր փականով, ինչպես նաև պատերի երեսպատում գիպսակարտոնով և մետալոպլաստե կարկասով, որի համար Ձեզ տրվել է 7 աշխատանքային օր՝ համաձայն 24.03.2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-

2020/Ա-36 պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետի պահանջի /նշելով վերանորոգման համար նախընտրելի ժամանակահատված/:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ գրությամբ նախատեսված աշխատանքները «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել, ինչպես նաև գրությանը արձագանք չի եղել, որից հետևում է, որ կազմակերպությունը կարող էր կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները և այլ ժամկետ սահմանելու կարիք չի եղել, ուստի Ձեզ ևս մեկ անգամ տրվում է 3 աշխատանքային օր վերոնշյալ ծառայությունների մատուցման համար, հակառակ դեպքում 24.03.2020թ. կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագրի 2.1.3 և 7.9-րդ կետով սահմանված պահանջներով պայմանագիրը միակողմանի կլուծարվի և Ձեր հանդեպ կկիրառվեն վերոնշյալ պայմանագրի 5-րդ կետով սահմանված դրույթները»:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 26.11.2020թ. թիվ 27/1188 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման ծառայությունների գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 26.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ ամփոփելով գործով առկա վերոգրյալ փաստերը, համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) ***խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:***

Պայմանագրի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Կողմերի միջև Պայմանագիրը կնքվել է 24.03.2020թ.:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ կետով սահմանվել է, որ ***աշխատանքների կատարման ծավալները Պատվիրատուի կողմից ներկայացվելու է աշխատանքների կատարման և վերանորոգման պահանջարկը առաջանալու դեպքում:***

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ կետով սահմանվել է, որ ***Մասնակիցը պետք է հավաստի, որ Պատվիրատուի պահանջարկի դեպքում նույն օրվա ընթացքում պետք է ապահովի ներկայացվող աշխատանքների կատարումը, կախված պատվերի ծավալից, բայց ոչ ուշ, քան պատվիրատուի կողմից առաջարկված նախընտրելի ժամանակահատվածում:***

Այսպիսով՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն իր և ՀՀ ոստիկանության միջև 24.03.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է Պատվիրատուի պահանջարկի դեպքում նույն օրվա ընթացքում ապահովել ներկայացվող աշխատանքների կատարումը՝ կախված պատվերի ծավալից, բայց ոչ ուշ, քան պատվիրատուի կողմից առաջարկված նախընտրելի ժամանակահատվածում, ՀՀ ոստիկանությանը մատուցելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ Պատվիրատուն ծառայության

մատուցման պահանջ է ներկայացրել 07.10.2020թ.՝ տրամադրելով 7 աշխատանքային օր, այնուհետև 16.10.2020թ. գրությամբ ժակետը երկարաձգել է՝ տրամադրելով ևս 3 աշխատանքային օր, մինչդեռ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 26.11.2020թ., չի մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունը՝ խախտելով ծառայության մատուցման ժամկետը, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.12.2020թ. թիվ 26/26-1/18217-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**